

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ւ

1 9 7 7

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Մ Ա Ր Ե Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ւ



Cathedral Armenienne St. Gregoire L'Illuminateur  
Montréal

615 Ave. Stuart, Outremont, Québec

## ՊԱՐՈՒՀՆԱԿՈՒԹԻՒՆ

Հրաւէր եւ օրակարգ	• • • • • • • • • • • • • • •	էջ	1
Սահմանադրական կանոններ	• • • • • • • • • • • • •	էջ	2
Հովիւի տեղեկատուութիւն	• • • • • • • • • • • •	էջ	3
ծխական Խորհուրդոյ քարոյական տեղեկատուութիւն.	• •	էջ	5
Եկեղեցւոյ Յանձնախումբերու քարոյական տեղեկ.	• • •	էջ	9
ծխական Խորհուրդոյ Նիւթական հաշուեստուութիւն	• •	էջ	17
Եկեղեցւոյ Յանձնախումբերու Նիւթական հաշուետ.	• •	էջ	21
Թեկնածուներու ցանկ	• • • • • • • • • • • •	էջ	25

# ՍՊԻ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿԻՈՒԹՅ ՄԵՅՐ ՏԱՋԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Մոնթրէալ 1 Փետրուար 1978

Հ Ր Ա Խ Է Ր  
ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովհանն ու ծխական Խորհուրդը այսու կուգան Զեզ հրաւիրել Տարեկան Անդամական Ընդհանուր ժողովի, որ պիտի գումարուի

Կիրակի, 12 ՓԵՏՐՈՒԱՐ 1978, ԺԱՄԸ 15-ԻՆ  
Եկեղեցւոյս Մարի Մանուկեան Սրահին մէջ:

Իւրաքանչիւր տրատու անդամի պարտականութիւնն է ներկայ գտնուիլ սոյն կարեւոր անդամական ժողովին, որուն օրակարգի նիւթերն են հետեւեալները.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ:-

- 1- Աղօթք եւ բացում
- 2- Ընտրութիւն օրուան դիւանի
- 3- Ընթերցում նախորդ ժողովի ատենագրութեան եւ վաւերացում
- 4- Անդրադառում նիւթա-բարոյական տեղեկատուութեանց եւ վաւերացում
- 5- 1978 տարուան նախահաշիւի վաւերացում
- 6- Ընտրութիւն ծխական Խորհուրդոյ 4 անդամներու
- 7- Ընտրութիւն 4 Պատգամաւորներու
- 8- Ընտրութիւն Հաշուեքննիչ Մարմնի
- 9- Ընտրութիւն Ընտրողական Մարմնի
- 10- Թելադրութիւններ եւ զանազանք
- 11- Ընտրութեանց արդիւնք
- 12- Փակման խօսք եւ օրհնութիւն:

ՊԱՐԵՏ ՎՐԴ. ԵՐԵՅԵԱՆ  
Նախագահ եւ Հոգեւոր Հովհիւ

Արթօ Պասմանեան  
Ատենապետ

Նուպար Պապիկեան  
Ատենադպիր

## ԿԱՆՈՆՆԵՐ՝ ԵԿԵՂԵՑԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- Յօդուած 5- ծխական ժողովը կը կազմուի բոլոր այն անձերէն՝ որոնք մկրտուած եւ դրոշմուած են Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, կ'ընդունին անոր վարդապետութիւնը, կանոններն ու ծէսերը եւ կը կատարեն Եկեղեցւոյ ու Համայնքին վերաբերմամբ իրենց պարտականութիւնները։ Այսպիսի անձինք կ'ըլլան ծխական Եկեղեցւոյ եւ անոր ծխական ժողովին իրաւասու անդամները։
- 6- ծուխի մը իւրաքանչիւր անդամ 18 տարիքը լրացուցած, պարտաւոր է իր պատկանած Եկեղեցւոյն Վճարել տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ որ կրնայ ծխական ժողովի կողմէ յաւելում կրել, սակայն չի կրնար նուազեցւիլ։
- 7- ծխական Եկեղեցւոյ մը 18 տարիքը լրացուցած իրաւասու անդամները իրաւունք ունին նոյն ծուխի ծխական ժողովներուն մասնակցելու եւ քուէ տալու, պայմանաւ որ առ նուազն վեց ամիս անցած ըլլայ իրենց անդամակցութենէն ասդին եւ իրենց անդամատուրքերը վճարուած ըլլան։ Կրնան ընտրուիլ իրենց անդամագրութենէն մէկ տարի եաք, եթէ 21 տարեկան եղած են։
- 8- Այն անդամները՝ որոնք զանցառու գտնուած են Վճարելու մէկ կամ աւելի տարուան անդամատուրքերը՝ նովին իսկ գործով կը կորսնցնեն ծխական ժողովներու մէջ քուէարկելու եւ ծուխէն ներս պաշտօնի ընտրուելու իրենց իրաւունքները։ Նման անդամներ կրնան վերստանալ այս իրաւունքները, վճարելով իրենց գէթ վերջին երկու տարուան յետնեալ անդամատուրքերը։

## ԿԱՆՈՆՆԵՐ՝ ԺԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- 16- ծխական ժողովի հրաւելու պէտք է դրկուի գրաւոր իւրաքանչիւր անդամի անհատապէս ժողովի թուականէն առնըւազն մէկ շաբաթ առաջ եւ պէտք է պարունակէ ժողովին օրակարգը։ Ժողովին օրակարգը կը պատրաստուի Հովհաննես ծխական Խորհուրդի կողմէ։ Օրակարգին վրայ կ'աւելցուին նոր հարցեր, ծխական ժողովի մեծամասնութեան քուէով։
- 17- ծխական ժողովը օրինաւոր կը համարուի քուէարկու անդամներու առնուազն մէկ-երրորդի, կամ յիսուն անդամներու ներկայութեամբ, եւ որոշումներ կ'առնուին ներկայ եւ քուէարկու անդամներու մեծամասնութեամբ։
- 22- իւրաքանչիւր անդամ ունի միայն մէկ քուէի իրաւունք՝ որ փոխանցելի չէ, եւ անձամբ պէտք է տրուի։ Քուէից հաւասարութեան պարագային նախագահը կուտայ վճռական քուէն կամ կը թոյլատրէ երկրորդ քուէարկութիւն մը նոյն հարցին մասին։



Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Հ Ո Վ Ի Ւ Ւ

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ

1977

Սիրելի ծխականներ,

Աստուծոյ շնորհքով եւ ողորմութեամբ տարի մը եւս բոլորեցինք այս գաղութէն ներս որպէս անդամներ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ, միշտ անսասան պահելով մեր հաւատքն ու նուիրումի ոգին հանդէպ մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այս առիթով, պարտք կը զգամ յայտնելու իմ անկեղծ շնորհակալութիւնս Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, որ Վստահեցաւ ինձի յանձնել հոգեւոր հովուութեան պաշտօնը մոնթրէալահայութեան եւ Օթառուայի զոյգ համայնքներուն, ինչպէս նաեւ պարտք կը զգամ յայտնելու իմ անկեղծ զգացումներս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին եւ անոր Ատենապետին, որ հաւանութիւնը յայտնեցին զիս ընդունիլ որպէս այս գաղութին հոգեւոր հովիւը:

Աստուծոյ օրհնութեամբ, ես իմ կարելիս պիտի ընեմ ծառայելու այս համայնքին հոգեւոր մշակութային եւ կրթական հաստատութեանց, բարձրացնելով մանաւանդ մեր ժողովուրդին հոգեւոր եւ ազգային դաստիարակութեան պէտքը:

Ուրախ եմ յայտնելու, որ այս տարեշրջանին մեր գաղութէն ներս ունինք երկու հոգեւորականներ Հոգ. Տ. Կոմիտաս Աքեղայ Շէրպէթմեան, ուսանող Մաքիլ համալսարանի եւ Արժ. Տ. Յուսիկ Քինյ. Նշանեան, որոնց օգնութեամբ Եկեղեցական արարողութիւնները եւ հոգեւոր երաժշտութիւնը պիտի ջանանք վառ պահել մեր Եկեղեցիէն ներս:

Տարուան ընթացքին, կատարուած են պատարագի եւ միւս բոլոր Եկեղեցական արարողութիւնները անխափան:

1977-ի տարեշրջանին, կատարուած են հետեւեալ խորհրդակատառութիւններն ու ծէսերը Մկրտութիւն՝ 59, Պատկ 27 եւ Թաղում՝ 15 հատ:

Եկեղեցական արարողութեանց կարգին անպայման պէտք է նշենք Կոմիտաս Դպրաց Դասի բազմածայն երգեցիկ խումբը. Դեկավարութեամբ Յակոբ Ցնծալեանի եւ մասնակցութեամբ երգեհոնահար Արթօ Միւհէնսիսեանի, որոնք նուիրուած ոգիով Եկան եւ փայլը աւելցուցին մեր Եկեղեցւոյ գեղեցիկ շարականներուն։ Այսուհանդերձ, մեր Եկեղեցւոյ սարկաւագաց դասը եւ ուրարակիրներ դարձեալ Եկան եւ օգնեցին մեզ Ս. Պատարագի եւ այլ արարողութեանց ընթացքին։

Այսու, ես իմ մասնաւոր շնորհակալութիւններս կը յայտնեմ մեր սարկաւագներուն եւ Դպրաց դասին տարած աշխատանքներուն։

Այս պատեհութիւնը օգտագործելով դարձեալ մի քանի խօսք ունիմ, մեր Եկեղեցւոյ պաշտօնաթերթ՝ Հուրաստանին խմբագրութեան կազմին, յատկապէս Պրն. Նուրհան Ուզունեանին տարած անխոնչ աշխատանքին։

Արդարեւ, իմ շնորհակալութիւններս կը յայտնեմ Մամիկոնեան Մշակ. Յանձ. ին տարած աշխատանքներուն։

**ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՌԻ  
ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒԹԻՒՆ Էջ -2-**

Մեր Եկեղեցւոյ անքաժան մասերէն մէկը կրնանք նկատել, Եկեղեցւոյս Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը, որոնց աննկուն աշխատանքով զարկ տուին մեր ծեռնարկներուն յաջողութեանց: Տիկնանց Միութեան ատենապետուհի՝ Ցիկին Հայկուհի Կուտսուզեանի գլխաւորութեամբ, մեր շնորհակալական խօսքերը կ'երթան իւրաքանչիւր անդամուհին:

Յառաջիկայ տարիներուն, երբ մեր Եկեղեցին հետգիտետէ աւելի պիտի մեծնայ իր պէտքերով եւ անդամներով, անհրաժեշտութիւնը պիտի զգացուի նիւթական եւ բարոյական օգնութեան մեր ջերմեռանթ ժողովուրդին, որոնք ինչպէս անցեալին, գիտցած էին վառ պահել մեր հոգիներուն եւ մտքերուն տաճարները, հիմա եւս վըստահ ենք, որ անոնք դարձեալ զօրավիզ պիտի կանգնին մեր սրբազն հաստատութեան, իրենց անմշական օժանդակութեամբ:

Մտածումներու կարգին, դարձեալ պէտք է շնորհակալութիւն յայտնեմ, ի մասնաւորի այն անձերուն, որոնք աշխատեցան անցեալ տարիներու ընթացքին, միշտ օգտակար հանդիսանալով մեր Ս. Եկեղեցիին: Ըլլան անոնք մեր Թեմական Պատգամաւորները, մեր զրասեներակի պաշտօնեան եւ կամ յանձնախութերու ատենապետներուն եւ անոնց վարչական կազմերուն բոլոր նուիրեալ անդամներուն:

Ես կ'աղօթեմ, որ Աստուած իւրաքանչիւրիդ իր առատարաշի շնորհը պարզեւէ եւ իր օրհնութիւնը ծեր վրայէն անպակաս ընէ, պահպանէ մեզի եւ մեր տուներուն մէջ, եւ մեր գործեռուն մէջ, շարունակելու համար մեր բարի գործերը:

Օրհնութեամբ եւ աղօթքով

ՊԱՔՏ ՎՐԴ. ԵՐԵՑՆԱՆ  
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՌ

Մոնթրէալ,

Ծ Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ո Յ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՌԻԹԻՒՆ

1 9 7 7

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ նորընտիր ծրական Խորհուրդը իր անդրանիկ նիստը գումարեց 8 Մարտ 1977-ին, որուն ընթացքին ժողովը կազմեց իր դիւնքը ըստ հետեւեալին.

ՊՐՆ. ԱՐԹՈ ՊԱՍՄԱՃԵԱՆ	ԱՄԵՆԱՎԵՇ
ՏՈՒԹ. ՀՐԱՅՐ ՏԵՐ ԳԵՎՐԳԵԱՆ	ՓՈԽ-ԱՄԵՆԱՎԵՇ
ՊՐՆ. ՄԻՒԱՔ ԿՈՒՏՍՈՒԶԵԱՆ	ԱՄԵՆԱԴՊԻՐ
ՊՐՆ. ՍՈՒՊԱՐ ՊԱԿ ԻԿԵԱՆ	ՓՈԽ-ԱՄԵՆԱԴՊԻՐ
ՊՐՆ. ԳԵՈՐԳ ՓԵԼԹՔԵԱՆ	ԳԱՆԺԱՎԱՆ
ՊՐՆ. ՎԱՀԱԳՆ ԱԶՅԱՀՈՒՐ	ՀԱՉՈՒԱՎԱՆ
ՊՐՆ. ՕՆՆԻԿ ՊԱԼԵԱՆ	ԱՆՃՆԱՓՈԽԱՆՈՐԴ
ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՏԻԳՐԱՆԵԱՆ	ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՊՐՆ. ՍՈՒԻՐԵՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ	ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՊՐՆ. ԱԼԵՔՍ ԳՈՒՆԹՔՐԵԱՆ	ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Անցնող տարեշրջանին, Խորհուրդս գումարեց 48 լիակատար նիստեր, որոնց ընթացքին աչալորդօրէն եւ անդամներու ծշղապահութեամբ ու կանոնաւորութեամբ քննարկուեցան Եկեղեցւոյ, յարակից մարմիններու ինչպէս նաեւ, ընդհանուր առմամբ, գաղութս հետաքրքրող հըրատապ հարցեր:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐՄԻՆՆԵՐ:-

Խորհուրդս յատուկ հանդիպումներ ունեցաւ Եկեղեցւոյս բոլոր մարմիններուն հետ մօտէն ծանօթանալու տարուած աշխատանքին եւ սատարելու անոնց յաջողութեան:

Հոգեւոր Հովհիւին բացակայութեան, ծխական Խորհուրդի անդամները ներկայացուցիչի պաշտօններ ստանձնեցին բոլոր մարմիններէն ներս, յարաբերութեան սերտ կապեր հաստատելու համար Խորհուրդոյս եւ մարմիններու միջեւ:

Բարելաւելու համար Շաբաթօրեայ վարժարանի ուսումնական մակարդակը, Խորհուրդոյս հովանաւորութեամբ, ծնողական յանձնախութեամբ կողքին, կազմուեցաւ նաեւ Ուսումնական Խորհուրդ մը, որուն մտանոգութիւնը պիտի ըլլար վերամշակել վարժարանին ուսումնական ծրագիրը: Սոյն Խորհուրդին թելադրանքով, վարժարանի տնօրէնութեան պաշտօնին կոչուեցաւ, Սուտանի Ազգ. Վարժարանի նախկին տնօրէն եւ այժմ մոնթրէալաբնակ Պրն. Օննիկ Գալուստեան:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՀԻՒ ԺԱՄԱՆՈՒՅՄ:-

Առաջնորդ Սրբազն Հօր բարեհաճ կարգադրութեամբ, մեր գաղութին հովուական պաշտօնին կոչուեցաւ Հոգէ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան: Հայր Սոււրբ քաղաքս Ժամանեց 28 նոյեմբեր 1977-ին, ստանձնելու համար իրեն վստահուած պաշտօնը: Այս ուրախ առւթիվ, ծխական Խորհուրդս յատուկ ընդունելութիւններով, հրաւիրեց Եկեղեցւոյս Մարմիններու, ինչպէս նաեւ գաղութիս մէջ գործող զանազան Միութիւններու եւ Յարանուանութեանց ներկայացուցիչները, բարի գալուստ մաղթելու եւ մօտէն ծանօթանալու նորընտիր Հոգեւոր Հովհիւին:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ : -

Նկատի ունենալով Եկեղեցւոյս մատակարարութեան դժուարին եւ պատասխանատու գործը, Խորհուրդն յարմար նկատեց կազմել յատուկ մարմին մը, բաղկացած ժողովիս մաս կազմող երեք Խորհրդատու հետեւեալ անդամներէ՝ Գրիգոր Տիգրանեան, Սուրէն Շիշմանեան եւ Ալեքս Գունթէրեանէ; որոնք ամբողջ տարուան ընթացքին, յետամուտ եղան Եկեղեցւոյ կալուածին մատակարարման եւ արդիականացման, եւ առաջին հերթին վերանորոգութեցաւ Մարի Մանուկեան սրահի խոհանոցը, աւելի դիւրութիւններ ընծայելով զայն գործածողներուն։ Ցածրդղաբար նոյն սրահը օժտութեցաւ ծայնի սարգաւորումներով, որուն ծախսերը հոգացութեցան, մեր Եկեղեցւոյ հաւատացեալ խումբ մը տիկիններու կողմէ։

Այս տարի եւս, Արմէն-Քէպէք Հ.Բ.Ը.Մ. Ամենօրեայ վարժարանի նախամանկապարտէզի բաժինը, մէկ տարուան համաձայնութեամբ, հաստատութեցաւ մեր կալուածէն ներս։

Մարի Մանուկեան սրահը, շարունակաբար տրամադրութեցաւ թէքեան Մշակ։ Միութեան, ինչպէս նաեւ Պոլսահայ Միութեան զանազան յանձնախումբերու փորձերուն, փոխան համապատասխան վճարումներու։

Եկեղեցւոյ տանիքը մասամբ, իսկ ջերուցումի սարգաւորումները գրեթէ ամբողջութեամբ ենթարկութեցան նորոգութեանց։

Մարի Մանուկեան սրահը օժտութեցաւ զովացուցիչներու մեքենայով մը։

ԶԵՐՄԱՐԿՆԵՐ : -

Ապրիլ 24-ին, Խորհուրդոյս հովանաւորութեամբ եւ համայանքի զանազան կազմակերպութիւններու գործակցութեամբ, նշութեցաւ Մեծ Եղեռնի Յուշատօնը, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան սրահին մէջ։

Եկեղեցւոյս տարեկան Տէպիւթանթներու ու աւանդական պարագաներու տեղի ունեցաւ 21 նոյեմբեր 1977-ին, «Շաթօ Շամփլէյն» սրահներուն մէջ։ Պարահանդէսի Կարգադիր Յանձնախումբի անդամները, ատենապետութեամբ՝ Պրն։ Ժագ Սուքիասի, բժանդրութեամբ պատրաստեցին պարահանդէսի բոլոր աշխատանքները։ Այս տարի եւս, շնորհիւ Յանձնախումբի անդամներուն տքնածան աշխատանքին, պարահանդէսը արձանագրեց նիւթական եւ բարոյական աննախընթաց յաջողութիւն մը։ Այս առթիւ, պարագ կը զգանք մեր գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերը ուղղելու Յանձնախումբի ատենապետին՝ Պրն։ Սուքիասի եւ բոլոր անդամներուն։

Եկեղեցւոյս Օծման 7րդ տարեղարձին առիթով, կազմակերպութեցաւ սիրոյ ճաշասեղան մը, նախազահութեամբ համայնքիս նորընտիր Հոգեւոր Հովհաննէ Հոգէ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի։ Սոյն տօնակատարութեան ընթացքին, առիթը ընծայութեցաւ մեր համայնքի անդամներուն մօտէն ծանօթանալու Հոգեւոր Հովհաննէ։

Եկեղեցւոյս տարեկան գրօսապատոյտը տեղի ունեցաւ Օգոստոս ամսուան ընթացքին։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒԹԻՒՆ : -

Մոնթրէալահայ մեր զաղութը, յատուկ ուշադրութեան եւ գուրգուրանքին արժանացած է Հ.Բ.Ը.Մ. Միութեան ցկեանս նախազահայ

Եւ բարերար Տիար Ալեք Մանուկեանի: Մեր գաղութի կազմութեան, ան զնահատելով տարուած աշխատանքը առաջին օրէն իսկ, ինչպէս ամենուրեք գաղութիս եւս բերած է իր բարոյական եւ նիւթական մասնակցութիւնը: Այս տարի, Պրն. Ա. Մանուկեան զնահատելով եկեղեցւոյ շուրջ տարուած աշխատանքները, 10,000 ամերիկեան տոլարի նուիրատուութեամբ մը անգամ մը եւս երախտապարտ թողուց մեր բոլորը:

Խորհուրդս պարտք կը զգայ պաշտօնապէս իր շնորհակալական եւ երախտագիտական անկեղծ զգացումները յայտնել մեծանուն բարերարին:

#### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ:-

Տարւոյս ընթացքին, պատեհութիւնը ունեցանք մեր մէջ ընդունելու, վիճակիս ուրեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոս Արք. Մանուկեանը, Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանը, Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Նրէցեանը, Արժ. Տ. Վարդան Քնյ. Տիւլկէրեանը, ինչպէս նաև Պոլսէն Արժ. Տ. Գառնիկ Քնյ. Գամշեանը:

Սոյն տարուան ընթացքին, առիթը ունեցանք նաեւ վայելելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ՝ պատմաբան Պրն. Յովհաննէս Թօփուղեանը, ընկերակցութեամբ, Հնդկաստանի համայնքի ծանօթ ազգայիններէն՝ որոնց հետ Խորհուրդիս անդամները ունեցան յատուկ հանդիպում մը, շօշափելու մեր Եկեղեցին հետաքրքրող կարեւոր հարցեր:

#### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃՈՂՈՎՆԵՐ:-

Մայիս ամսուան ընթացքին, Փրավիտէնսի մէջ կայացած Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովին, իրենց դրական մասնակցութիւնը բերին Եկեղեցւոյս երեք պատգամաւորները, ինչպէս նաեւ Խորհուրդոյս Ատենապետը:

Խորհուրդոյս անդամները եւ Պատգամաւորները մասնակցեցան նաեւ Գանատայի Երջանային ժողովներուն, որոնք յաջորդաբար անդի ունեցան՝ Սէյնթ Քաթրինզի, Թորոնթոյի եւ Սիակարա ֆոլգի մէջ:

#### Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք :-

Անցնող տարուան ընթացքին, Խորհուրդոյս կատարած անդամարշաւը համայնքէս ներս, տուաւ իր դրական արդիւնքը, յատուկ զրութիւններով հրաւիրեցինք մեր ժողովուրդը անդամակցելու մեր Եկեղեցին եւ իր մասնակցութիւնը բերելու անոր բարօրութեան: Այս շրջանին, Խորհուրդս յատուկ ուշադրութեան առարկայ դարձուց վարչական եւ կազմակերպչական գործունէութիւնները:

#### ԹԵԼԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐ:-

Ծխական Խորհուրդս կ'առաջարկէ որ յետ այսու անդամատուրքերու սակերր զանձուին հետեւեալ հիման վրայ, եւ զայն կը յանձնէ Անդամական Ընդհ. ժողովի նկատողութեան.

18-21 տարեկան անդամներ անժ գլուխ	15.00
21-65 "	25.00
65-էն վեր " "	15.00

Այս պատեհութեամբ, Խորհուրդս կուգայ իր շնորհակալական խօսքերը ուղղել Եկեղեցւոյս մարմիններուն, համայնքիս մէջ գործող բոլոր կազմակերպութեանց, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք անցնող տարեշրջանին, իրենց բարոյական եւ նիւթական աջակցութեամբ սատարեցին Եկեղեցւոյս պայծառութեան:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մոնթրէալ, 19 Յունուար 1978

ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏՈՒՐՈՒ ՄԱՐՄԻՆ  
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՐՈՒԹԻՒՆ

1 9 7 7

Անցեալ տարուան Հնդին. Անդամական ժողովին, որ գումարուած էր 27 Փետրուար 1977-ին, առնուած որոշման համաձայն, ծխական Խորհուրդներու նախկին ատենապետներէն քաղաքացած մարմին մը պիտի զբաղուի, փոխարինելով Պարտքի Շիջման Մարմինը, նոյն հարցերով եւ աւելի ծաւալուն կերպով:

Արդ, նախկին ատենապետներու Մարմինը, ծխական Խորհուրդոյ հետ հանդիպում մը ունենալէ յետոյ, իր անդրանիկ նիստը գումարեց 4 Մայիս 1977-ին եւ կազմեց իր դիւանը ըստ հետեւեալին.

ՊՐ. ԵՐՈՒԱՆԴ ՇԻՇՄԱՆԵԱՆ	ԱԹԵՆԱՊԵՏ
ՊՐ. ՎԱՀԱՆ ՔԷԹԼԻ	ԱԹԵՆԱՊԵՏ
ՊՐ. ՑԱՆՈՐ ՔԷՄՔՅԵԱՆ	ԽՈՐՀՈՐԴԱԿԱՆ
ՏՈՒԹ. ԱՐԹՈ ՏԷՄԻՐՃԵԱՆ	ԽՈՐՀՈՐԴԱԿԱՆ
ՊՐ. ԼԵՒՈՆ ԳՈՐԾԵԱՆ	ԽՈՐՀՈՐԴԱԿԱՆ

Այս Մարմինը, նկատի ունենալով անցեալ տարիներու օգտաշատ մատնակցութիւնները Պարտքի Շիջման Մարմինէն ներս, որոշեց իր ներկայ Մարմնոյն մաս կազմել նաեւ Պրնք.՝ Կայծակ Օղիկեանը որպէս զանձապահ եւ Վահէ Ալթունեանը որպէս հաշուապահ:

Սոյն Մարմինը ամիսը անգամ մը հաւաքուելով կատարեց լիակատար ժողովներ, որոնց ընթացքին ընդհանուր առմամբ զբաղուեցաւ երկար ծրագիրներով եւ հետեւեալ հարցերով.

1- Տրուած ըլլալով Եկեղեցւոյ Ենթակայ Մարմիններու մօտ գտնուած ցրուած պահնեսահ գումարները, Մարմնոյս կողմէ առաջարկուեցաւ, որ զանոնք միացուլուին եւ դրուին այս Մարմնի հսկողութեան տակ, որպէսզի կարելի ըլլայ յառաջիկային մտածել հասութաբեր օգտագործման մասին:

2- Նկատի ունենալով Եկեղեցւոյ յարակից մարմիններու զանազան դրամատուններու մէջ ի պահ դրուած գումարները, առաջարկուեցաւ զանոնք անջատ թիւներու տակ եւ Եկեղեցւոյ անուան եւ Ենթակայ մարմնի անուան միանգամայն տակ, ծխական Խորհուրդոյ հաշիւներու գտնուած դրամատան մէջ ամփոփել:

3- Իր յառաջիկայի ծրագիրներուն մասին Մարմինս, իր ԱԹԵՆԱՊԵՏԻՆ կողմէ պատրաստուած մանրամասն տեղեկագիր մը յանձնեց ծխական Խորհուրդ:

4- Սոյն Մարմնոյն կարեւորագոյն գործերէն մին պիտի ըլլայ ապահովել հասութաբեր աղքիւններ, որոնց շնորհիւ տարուէ տարի քարձրացող Եկեղեցւոյ ծախսերը, կարելի պիտի ըլլայ դիմագրաւել աւելի դիւրութեամբ:

5- Սոյն Մարմինը առաջարկեց նաեւ զարկ տալ անդամարշաւի եւ նկատի ունենալ անդամատուրքերու յաւելման եւ պաշաճեցութեան առնչութեամբ:

6- Վերջապէս այս Մարմինը ծխական Խորհուրդոյ նկատողութեան յանձնեց, որ հասութաբեր ծեռնարկները ըլլան յաճախակի, որպէսզի կարելի ըլլայ դրամաճումի եւ տնտեսական դժուարութեանց դէմ, մեր Եկեղեցին աւելի ապահով, կարենայ շարունակել ապագայի իր գործառնութիւնները:

Երուանդ Շիջմանեան  
ԱԹԵՆԱՊԵՏ

Վահէ Քէթլի  
ԱԹԵՆԱՊԵՏ

ԿՈՄԻՏԱՍՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ  
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1 9 7 7

Դպրաց Դասուս նորընտիր վարչութիւնը իր անդրանիկ նիստը գումարելով 10 Մարտ 1977-ին, կազմեց իր դիւտանը ըստ հետեւեալին։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ.	ՔԷՓԷՋԾԻ	Ատենապետ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ.	ՍՐՄԱՔԵՇԵԱՆ	Փոխ-ատենապետ
ՅԱԿՈԲ ԿԷՐԻՔԵԱՆ		Ատենադպիր
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ		Փոխ-ատենադպիր
ԱՐԱ ԿԷՐԻՔԵԱՆ		Գանձապահ
ՄԱՐԹԻՆ ՄԱՐՄԵԼԵԱՆ		Հաշուապահ
ԱԻԵՏԻՍ ՊԱՍՄԱՃԵԱՆ		Գոյքապահ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ :-

Դիւտանի կազմութենէն անմիջապէս յետոյ լծուելով աշխատութեան, Դպրաց Դասու անդամները վերսկսան փորձերուն եւ շնորհիւ անձնուէր վարիչ՝ Պրո. Յակոբ Ցնծալեանի անխոն ջանքերուն այսօր հպարա կը զգանք ունենալով ՅՈ հոգինոց առական երգչախումբ մը, որ կը պայծառացնէ մեր եկեղեցին գրեթէ ամէն Կիրակի տեղի ունեցած պաշտամունքներուն։

Մայիս ամսուան ընթացքին, կազմակերպուեցաւ Դասէս անդարձ / բաժնուող անդամներու ի յիշատակ հոգեհանգստեան յատուկ պաշտօն եւ ապա Սարի Մանուկեան սրահին մէջ սպասարկուեցաւ հոգենաշ, որուն ընթացքին վարիչի գլխաւորութեամբ երեք վեթերան անդամներ պարզեւատրուեցան զանազան նուէրներով։

Դպրաց Դասուս ջանքերով եւ աշխատութիւններով Եկեղեցւոյս Աւագ Խորանին շրջանակը յաւելեալ լոյսերու սարգաւորումով ստացաւ աւելի փայլ։

Պատրաստուեցաւ 40 նոր շապիկներ, որոնք կարեւոր պակաս մը լրացրելով, եկան աւելցնել պատշաճութիւնը։

Յաջորդաբար, կրկին վարչութեանս ջանքերով, ծեռնարկուեցաւ շինութեան մարմարէ եւ ոսկեայ տառերով քանթակուած Եկեղեցւոյս Օծման հանդիսութիւնը յաւէրժացնող ցուցատախտակի մը, զոր զետեղուեցաւ Եկեղեցւոյս մուտքի դրան վրայ։

Հոկտեմբեր ՅՈ-ին, մեծ շուրջով տօնուեցաւ Դասուս հիմնարկութեան 19րդ տարեղարձը հոգեւոր եւ աշխարհիկ հանդիսութիւններով, ուր առաջին անգամ ըլլալով նոր շապիկները գործածուեցան։

Վարչութեանս ինդրանքին ընդառաջելով, ծխական Խորհուրդոյ կողմէ տրամադրուած աշխատասեննեակը հիմնովին նորոգելով եւ զայն կահարուելով, վերածուեցաւ վարչութեանս ժողովասեննեակը, ուր կը պահուին նաեւ մեր գոյքերն ու նոր շապիկները։

Այս տարեշրջանին եւս Կոմիտաս Դպրաս Դասըս բերաւ իր լրիւ մասնակցութիւնը տեղի ունեցած Միացեալ Պաշտամունքին, արժանանալով հայ թէ օտար հաւատացեալներու անվերապահ գնահատանքին։

Վերեւ յիշուած բոլոր գործունէութիւնները կարելի եղաւ իրագործել շնորհիւ մեր պատուական բարեպաշտ ժողովուրդին, որոնք իրենց ներկայութեամբ եւ նաեւ առատածեոն նուիրատուութիւններով զօրավիզ կանգնեցան եւ նպաստեցին մեր աշխատութիւններուն։ Կոմիտաս Դպրաց Դպրաս, ամէն գնով կը ջանայ վառ պահել Լուսաւորչի Կանթեղը ի փառս եւ ի պայծառութիւն մեր սուրբ Եկեղեցւոյ։

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ ԿՈՄԻՏԱՍՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ

ՀԱԲԱԹՈՐԵԱՅ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱԽԻ  
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՌԻԹԻԻՆ

1 9 7 7

Եկեղեցւոյս Շաբաթօրեայ վարժարանը 24 Սեպտեմբեր 1977-ին վերաբացուելով, սկսաւ իր 1977-78 դպրոցական տարեշրջանի դասաւանդութեան: Սալորդ տարուան վարժարանի անսչունին Տիկ. Արաքսի Ազնաւուր անձնական պատճառներով հրաժարած ըլլալով, Ուսումնական Խորհուրդի առաջարկով եւ ծխական Խորհուրդոյ հաւանութեամբ, ներկայ տարեշրջանին, անսչունթեան պաշտօնը յանձնուեցաւ Պրն. Ընիկ Ժալուստեանի: Վարժարանի ուսումնական բոլոր հարցերով ու նաեւ ծրագիրներով կը զրադի Ուսումնական Խորհուրդս, որ սկսաւ իր աշխատանքներուն Ցունիս 1977-ին, ատենապետութեամբ Պրն. Երուանդ Ակիշեանի: Սեպտեմբեր 1977-ին սակայն Պրն. Ակիշեան եւ խորհրդական անդամներէն Պրն. Մկրտիչ Մկրտիչեանի քաղաքէս մեկնելուն պատճառաւ, Ուսումնական Խորհուրդս հետեւեալ ներկայ կազմով կը շարունակէ իր գործունէութեան.

Տիկ.	ԷԼՏԱ ԱՔԶԻՊՐԻԹԵԱՆ	Առենապետունի
ՊՐՆ.	ՎԱՀԷ ՔԷՐԵՍԹԷՃԵԱՆ	Առենադպիր
Տիկ.	ԻՐՄԱ ԱՇՀՃԵԱՆ	Գանձապահունի
Տիկ.	ՎԱՐԴՈՒՀԻ ՊԱԼԵԱՆ	Խորհրդական
ՕՐ.	ՅԱՍՍԻԿ ՄԱՆԿԱՍՄԵԱՆ	Խորհրդական
ՊՐՆ.	ՄՈՒՐԱՏ ՈՍԿԱՆԵԱՆ	Խորհրդական

Շաբաթօրեայ վարժարանը 1977-78 դպրոցական տարեշրջանին սկըսաւ եօթը դասարաններով եւ հետեւեալ ուսուցչական կազմով.

Տիկ.	ԱՆԳԻՆԻ ՇԱՔԱՐԵԱՆ	Ա. դասարան
ՕՐ.	ՆԻՆԱ ԾԵՐՈՒԽԵԱՆ	Բ. դասարան
Տիկ.	ՇՆՈՐՀԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ	Գ. դասարան
Տիկ.	ՌԵԲԵԿԱ ԹԱՇՃԵԱՆ	Դ. դասարան
Տիկ.	ԵՊՐՈՒՀԻ ՄԵԼԻՑՈՒՆԵԱՆ	Ե. դասարան
ՊՐՆ.	ՕՆԻՆԻ ԳԱԼՈՒԽՏԵԱՆ	Զ. դասարան
Տիկ.	ԱՆԱՀԻՏ ԷՎՐԵԿՈՒԼ	Է. դասարան
ՊՐՆ.	ՎԱՀԱՆ ՇԱՔԱՐԵԱՆ	Երաժշատութիւն

Նախորդ տարուան շրջանաւրա աշակերտներու փափաքին ընդառաջելով, 1977-ի նոյեմբեր ամսուան ընթացքին, Ուսումնական Խորհուրդոյս ոռոշումով, բացուեցաւ ութներորդ դասարանի դասընթացք մը, որուն պատասխանատուութիւնը յանձնուեցաւ Պրն. Մուրատ Ուկանեանի, որ արդէն իսկ փափաք յայտնած էր սոյն պաշտօնին, զոր կը տանի սիրայօժար պատրաստակամութեամբ:

Ներկայիս, Շաբաթօրեայ վարժարանը ունի 74 աշակերտներ, որոնց երթեւեկը կ'ապահովուի Արմէն-Քէպէք Հ.Բ.Ը. Ամենօրեայ վարժարանի սեփական օթօպիւսներով:

Դպրոցին մէջ կը դասաւանդուին հայերէն լեզու, գրականութիւն, ազգային պատմութիւն, կրօնք եւ երաժշատութիւն: Երաժշատութեան դաշնակով իր մասնակցութիւնը սիրայօժար կերպով կը բերէ նաեւ Տիկին Թէնթիւնեան: Դեկտեմբեր ամիսէն սկսեալ հայկական պարերու դասընթացք մըն ալ սկսաւ, սիրայօժար մասնակցութեամբ Պրն.

24 Դեկտեմբեր 1977-ին, տեղի ունեցաւ աշակերտներու յատուկ Տօնածառի հանդիսութիւն մը, Եկեղեցւոյս Մարի Մանուկեան՝ սրահին մէջ, որմէ առաջ աշակերտութեան մատակարարուեցաւ Ս. Հաղորդութիւն: Այս հանդիսութիւնը սկսաւ Հոգհ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի նախազանութեամբ եւ կարգ մը ազգայիններու ներկայութեան, որուն ընթացքին գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը բաղկացած երգերէ, արտասանութիւններէ, պարերէ եւ տրամախօսութիւնէ: Հանդէսի վերջաւորութեան աշակերտութեան յանձնուեցաւ զանազան նուէրներ: ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀ. ՇԱԲԱԹ. ՎԱՐԺ.

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒԹԻՒՆ

1 9 7 7

Յունուար ամսուան վերջին Շաբաթ օրը, ԵԿԵՂԵՑԵՈՅ ՎԿԱՀ է Յովսէփեան Ասրահին մէջ, ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ընդհանուր անդամական ժողովը գումարուեցաւ ի ներկայութեան 58 անդամուհիներու:

Ատենապետուհի Տիկ. Հայկուհի Կուտսուզեանի առաջադրութեամբ, ատենապրուհի Տիկ. Արաքսի Ազնաւուր կարդաց նախորդ շրջանի գործունէութեանց տեղեկատութիւնը: Ներկաները գոհ արամադրութեամբ գնահատեցին վարչութեան թափած ջանքերը, եւ փափաքեցան, որպէսզի անոնք նոյնութեամբ մնան իրենց պաշտօններուն վրայ:

Յաջորդաբար տեղի ունեցած վարչական ժողովին ընթացքին, տեղի ունեցաւ դիւանի ընտրութիւնը ըստ հետեւեալին.

Տիկ.	Հայկուհի Կուտսուզեան	Ատենապետուհի
Տիկ.	Շուշան Բրուտեան	Փոխ-ատենապետուհի
Տիկ.	Արաքսի Ազնաւուր	Ատենապրուհի
Օր.	Արուսեակ Փոլատեան	Փոխ-ատենապրուհի
Օր.	Մերսէտէս Սարաֆեան	Գանձապահ
Տիկ.	Թագուհի Հանէնեան	Հաշուապահ
Տիկ.	Արշակուհի Մուրատեան	Խորհրդական
Տիկ.	Րոզ Տիգրանեան	Խորհրդական
Օր.	Ալիս Պետրոսեան	Խորհրդական

Վերոյիշեալ վարչականները, հակառակ իրենց կամքին, տարւան ընթացքին յաճախ հերթական նիստ չկարողացան գումարել, առհասարակ ձեռնարկներու ընթացքին է, որ առիթ ստեղծեցին խորհրդակցելու եւ գործադրելու. գործնական այս միջոցը գրեթէ օգտակար արդիւնաւորուեցաւ:

Տիկնանց Միութիւնս, ԵԿԵՂԵՑԵՈՅ ուղիով ծառայեց համայնքին. կազմակերպեց նաշկերոյթներ, Մայրերու Օր ուան նուիրուած հանդիսութիւն, քառասունքի մաշ, հոգենաշ, յիշատակի ոգեկոչում իրմէ անդարձ բաժնուող անդամներու, որոնց կարգին է նաև Տիկ. Եւնիգէ Գարիպեանի՝ Տիկնանցի ցկեանս նախազահին ծօնուած հանդիսութիւնը:

Իր պատգամաւորներով ներկայ եղաւ, իրեն ուղղուած բոլոր հրաւերներուն, թէքեան Մշակ. Միութեան, Պոլսահայ Միութեան, ֆէրմառունթ Սէյնթ ճայլս քոյր միութեան: Աշխատութիւն տարաւ Զատկուան գունաւոր հաւկիթներու պատրաստութեան, մեծապէս սատարելով ծխական խորհուրդին:

Տիկնանցի վարչութեան, անդամներուն եւ համակիրներուն ներդաշնակ համագործակցութիւնը մեծապէս նպաստեց իր բարոյական եւ նիւթական արժէքաւորման: Մասնաւոր յիշատակութեան արժանացան՝ համայնքի եւ անդամներուն մասնակցութեամբ կատարուած զանազան քաղաքներու շրջապոյտները:

ԵԿԵՂԵՑԵՈՅ Օծման 7րդ տարեդարձի եւ նորընտիր Հոգեւոր Հովիլ՝ Հոգջ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի անդրանիկ Ս. Պատրագի կրկնակ հանդիսութեանց համար մեծ համոյքով պատրաստեց քօքթէյլ եւ նաշկերոյթները:

Այս տարի եւս օժանդակեց Երուսաղէմի վանքին երկու ուսանող-  
ներու կրթաթոշակին:

Դեկտեմբեր 4-5 շաբաթավերջին, կատարուեցաւ միութեանս ամենա-  
մեծ ծեռնարկներէն նկատուող տարեկան պազար-տօնավաճառը, որ ար-  
ձանագրեց բացառիկ յաշողութիւն եւ արժանացաւ բոլորին անվերա-  
պահ գնահատանքին, միանգամայն Եկեղեցւոյս ապահովելով բաւական  
շոշափելի գումար մը:

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնս հաւատարիմ իր պարտականութեան  
նախորդ տարուան նման, այս տարի եւս Պատուարժան ծխական Խոր-  
հուրդին փոխանցեց 5000 տոլարի գումար մը:

Հստ տուեալներու, անցնող տարեշրջանը Միութեանս համար հան-  
դիսացաւ անգամ մը եւս գոհացուցիչ եւ բեղուն, ի պայծառութիւն  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյս:

Հաւագոյն զգացումներով,  
ի դիմաց Տիկնանց Միութեան

Հ. Կուտսուզեան  
Ատենապետուհի

Ա. Ազնաւուր  
Ատենադպրուհի

Մոնթրէալ, 10 Յունուար 1978

**ՄԱՍԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ**

**ՔԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ**

**1977 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ**

**1977 տարուան ընթացքին Յանձնախումբս կը բաղկանար հետեւ-  
եալ անդամներէն.**

Պրն. Նուրիան Ուզունեան, Ատենապետ  
Պրն. Կարօ Շամլեան, Փոխ-ատենապետ  
Տիկ. Արարս Արթինեան, Ատենադպիր  
Տոքթ. Թագւոր Թունեան, Հաշուակալ-գանձապահ  
Պրն. Նորայր Արթինեան, Խորհրդական  
Տիկ. Անահիտ Շիշմանեան, Խորհրդական  
Տիկ. Ժորժէթ Ստեփանեան, Խորհրդական  
Պրն. Արտաւազդ Ստեփանեան, Խորհրդական  
Պրն. Աշոտ Գասպարեան, Խորհրդական

Ինչպէս անցեալ 15 տարիներու ընթացքին, այս տարի եւս  
Յանձնախումբս հաւատարմօրէն քալեց իր ծրագրած ուղիէն եւ ունեցաւ  
մշակութային զանազան ձեռնարկներ:

Փետրուարի 5-ին Յանձնախումբիս ջանքերովն ու մասնակցու-  
թեամբը հայկական մշակոյթի բացառիկ երեկոյթ մը տրուեցաւ Շէրպորւք  
քաղաքին մէջ, տեղւոյն ֆրանսախօս հասարակութեանը: Աւելի քան 400  
օտարազգիներ առաջին անգամ ըլլալով ծանօթացան հայ պատմութեան,  
Երգին ու պարին, ճարտարապետութեանն ու գեղարուեստին, ինչպէս նա-  
եւ հայկական ճաշատեսակներու:

Մարտի 13-ին Յանձնախումբս ընկերային երեկոյթ մը կազմա-  
կերպեց ի պատիւ հայրենի հոչակաւոր խմբավար Յովհաննէս Շէքինի,  
որու ներկայութիւնը մեծ եռանդ ստեղծած էր գաղութիս մէջ, եւ փոքր  
ինչ յոյսեր պապայ ծրագիրներու առնչութեամբ:

Մարտի 24-ին, ընդունելով Տոքթ. Գ. Պաղճեանի հրաւէրը, հե-  
ռուստատեսութեան հայկական ժամին ամփոփ կերպով ներկայացուեցաւ  
Յանձնախումբիս կատարած մշակութային աշխատանքներուն մէկ նկարը:  
Որպէս խօսնակ հանդէս եկան Պրն. Ուզունեանը եւ Պրն. Շամլեանը:

Ապրիլի 24-ին տեղի ունեցած սպատօնի հանդիսութեանց մասնակ-  
ցեցաւ նաեւ Յանձնախումբս, ի յարգանս մեր նահատակներու յիշատակին:

Մայիսի 24-ին տեղի ունեցաւ իիստ հետաքրքրական եւ ուսուցա-  
նող վիճաբանական երեկոյթ մը՝ որպէս հայ գոյատեւելու միջոցներուն  
եւ կարելիութիւններուն մասին: Ներկայ էր ընտրանի ազգակիցներու  
իումբ մը միայն, հետեւաբար եւ դժբախտաբար թիւով քիչ:

Հոկտեմբերի 11-ին ներկայացուեցաւ Արամ Խաչատուրեանի կեան-  
քին եւ երաժտութեանը նուիրուած գունաւոր եւ ֆրանսերէն խօսուն  
ժապաւէն մը, որմէ յետոյ ներկաները հիւրասիրուեցան Եկեղեցւոյս  
Տիկնանց Յանձնախումբին կողմէ ու մեկնեցան իիստ զո հունակ հոգեպէս  
եւ ֆիզիքապէս: Այս առթիւ Յանձնախումբս կը փափաքի իր շնորհակալու-  
թիւններն ու զնահատանքը յայտնել Տիկնանց Յանձնախումբին, այն գոր-  
ծակցութեանը համար զոր ի յայտ կը բերեն բազմաթիւ առիթներով:

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցաւ դասախոսական երեկոյ մը, ուր նարեկի յայտնի թարգմանիչ Միշա Գիւտեան խօսեցաւ Մարտիրոս Սարեանի կեանքին ու արուեստին մասին, ցուցադրելով բազմաթիւ լուսապատկերներ։


Հոկտեմբերի 18-ը յատկանշական թուական մըն էր, այն պատճառաւ որ ընդունեցինք հայրենի անուանի բանաստեղծ Վահագն Դաւթեանը եւ ծանօթ երգչուհի Աննա Նշանեանը, որոնք բանախօսութեամբ եւ համերգով հանդէս եկան Եկեղեցւոյս Մարի Մանուկեան սրահին մէջ։ Սրահը լեցուն էր իանդավառ բազմութեամբ, որոնք մինչեւ ուշ ատեն վայելեցին այս բացառիկ հիւրերուն ներկայութիւնը։

Դեկտեմբերի 3 եւ 4 օրերը տեղի ունեցաւ Տիկնանց աւանդական պազարը, ուր, վաճառուած ուտեստեղէններու եւ շրջազգեստներու կողքին, Յանձնախումբս ալ իր մասնակցութիւնը բերաւ բաշխելով մտքի եւ հոգիի սնունդ — զիրքեր, հայկական արուեստի ալպոմներ, բառարաններ, մանկական երգերու ժայնաերիզներ, ելն.։

Կը մնանք այն յոյսով, թէ հայ մշակոյթի մարգէն ներս ցանւած այս սերմերէն գէթ մի բանին կ'իյնան պարարտ հողի վրայ։

Ի դիմաց

Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբի



Ա. Ուզունեան  
Ատենապետ



Ա. Արթինեան  
Ատենադպիր

12 Յունուար 1978  
Մոնթէալ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԽՈՒԹԻՒՆ

”ԲՈՒՐԱՍԱՆ” ԱՄՍԱԹԵՐԹԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔԻ

1977 ՏԱՐԵՇՐՋԱՆ

”ԲՈՒՐԱՍՈՒԹԱՆ” ԱՄՍԱԹԵՐԹԻ պատասխանատու յանձնախումքը իր վերակազմեալ գեւը՝ ստացաւ միայն Յունիս ամսուան սկիզբը, ծխական Խորհուրդի հետ տեղի ունեցած հանդիպումէ մը յետոյ։ Ներկայիս Յանձնախումքին անդամներն են։

Ատենապետ՝ Պրն. Նուրհան Ուզունեան  
Ատենադպիր՝ Տիկ. Արարս Արթինեան  
Խորհրդական-աշխատակիցներ՝

Պրն. Գրիգոր Գըլճեան

Պրն. Սերովը Գույումճեան

Տորթ. Յարումիւն Արգումանեան

Պրն. Միսաք Կուտսուզեան

Պրն. Վահէ Քէթլի

Պրն. Ընիկ Գալուստեան

Ամսաթերթը կը հրատարակուի տարին 11 համար, Յուլիս-Օգոստոս միացեալ թիւով։ Մանեական բառախաղերու յաւելուածական էջը դադրած է երեւնալէ վերջին մի քանի ամիսներու ընթացքին, հետաքրքրութեան պակասի հետեւանքով։

Թերթը կը տպագրուի օֆսէթ եղանակով եւ տպաքանակն է 1000։

Այս տարի ծախսերու յաւելման հետեւանքով, Յանձնախումքս յարմար դատեց ծխական Խորհրդին թելաղը որ թերթին տարեկան բաժնեգինը բարձրանայ 5 տոլարէն 7 տոլարի, եւ ծխական Խորհրդը ընթացք տուաւայս թելաղը ութեան։

Յանձնախումքս համոզուած է, թէ ”ԲՈՒՐԱՍՈՒԹԱՆ”ը լուրջ եւ անփոխարինելի պաշտօն մը ունի կատարելիք, որպէս պաշտօնաթերթը Եկեղեցւոյ եւ արտայայտիչը այն բոլոր արժէքներուն եւ զաղափարներուն, որոնց դարաւոր աւանդապհն է Եկեղեցին։ Յանձնախումքիս նպատակն է աւելի որակաւոր դարձնել այս ամսաթերթը, թէ՝ պարունակութեամբ եւ թէ արտարինով, որու համար կոչ կ’ուղղենք մեր բոլոր ժողովուրդին՝ բաջալերելու եւ զօրավիգ կանգնելու ”ԲՈՒՐԱՍՈՒԹԱՆ”ին։

ի դիմաց

”ԲՈՒՐԱՍՈՒԹԱՆ” Ամսաթերթի  
Պատասխանատու Յանձնախումքի

Հ. Բագրատոս  
Ն. Ուզունեան  
Ատենապետ

Հրայր Եղբական  
Ա. Արթինեան  
Ատենադպիր

Ծ Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ի Ր Դ Ո Յ  
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈԽԵՏՈՒԽՈՒԹԻՒՆ

1 9 7 7

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.77</u>	<u>31.12.76</u>
Եկեղեցւոյ պնակէ . . . . . . . . .	12,155.00	10,753.00
Եկեղեցւոյ կալուածէն . . . . . . .	5,231.05	4,352.00
“ ” “ Հ.Բ.Ը. Եւ ՎԱՐԺ.	5,500.00	1,500.00
“ Բուրաստան” ամսաթերթէ . . . . .	3,943.00	3,555.00
Շաբաթօրեայ Վարժարանէ . . . . .	7,769.00	7,521.00
Խորհրդակառարութիւններէ . . . . .	5,250.00	4,855.00
Անդամավճարներէ . . . . . . .	1,907.00	1,313.00
“ Շիշման Յանձ. փոխանցուած.	1,100.00	1,000.00
Նուիրատուութիւններէ. . . . . . .	24,505.00	21,362.00
“ Իւղագին” Նուիրատուութիւններէ. . .	6,151.00	5,686.00
Տիար Ալեք Մանուկեանի Նուիրատուութիւն	10,000.00	- - -
Պատի օրացոյցերէ . . . . . . .	891.00	2,143.50
Դրամատան տոկոսէ Եւ ամերիկեան դր.տար.	1,507.66	4,621.53
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐԷ Եւ ՄԱՐՄԻՆՆԵՐԷ՝		
Եկեղեցւոյ տարեղարձէ . . . . . .	1,975.00	6,542.02
Շաբաթօրեայ Վարժարանի ծեռնարկէ . . .	2,400.00	2,185.00
Զատկուան զուն. հաւկիթներէ . . . .	2,285.00	2,282.50
Ապրիլեան տօնակատարութենէ . . . .	317.00	311.00
Զանազան աղբիւրներէ . . . . . .	512.00	- - -
Պարահանդէսի Յանձնախումբէ . . . .	5,712.29	7,000.00
Տիկնանց Միութենէ . . . . . . .	5,000.00	5,000.00
Դպրաց Դաս-Երգչախումբէ . . . . .	1,000.00	1,000.00
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ . . .	500,00	900.00
Երիտասարդաց Յանձնախումբէ . . . .	- - -	200.00
Հողի Վաճառման զուտ մուտքէ . . . .	- - -	51,700.00
Պոլսոյ Պատրիարքարանի գաղթականաց . .	3,065.00	- - -
	-----	-----
	108,676.00	145,782.55

Ծ Խ Ա Կ Ա Ն Ի Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ո Յ  
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱՆԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ  
 1 9 7 7

Ե Լ Ք

	<u>31.12.77</u>	<u>31.12.76</u>
Եկեղեց. ընդհ. ծախս եւ պաշտօնէութիւն .	17,446.44	21,980.59
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԼՈՒԱԾԻՆ		
Պահպանութեան • • • • • • • • • • •	25,535.54	17,770.53
Բարենորոգման • • • • • • • • • •	17,518.04	13,047.72
ՔԲՈՒՐԱՍՏԱՆԱ ամսաթերթի • • • • •	4,484.76	5,163.47
Շաբաթօրեայ Վարժարանի • • • • •	10,445.85	8,747.50
Պատի օրացոյցերու • • • • • • •	-	2,688.00
Գրասենեակային ծախքերու • • • • •	4,259.77	2,415.69
Զանազան գործ. եւ ընդունելութիւններու.	1,156.05	1,090.52
Առաջնորդարանի տուրք ի նիւ Եորք • •	11,376.00	10,227.10
Առաջնորդական Փոխ. տուրք ի Թորոնթօ .	-	750.00
Փոխառութեան վճարում Հ.Բ.Ը. Կելրոնին	-	35,000.00
Փոխանցում Շիջման Յանձնախումբի. • •	-	16,700.00
Պոլսոյ Պատրիարք. Գաղթականաց հիմնդ. ..	3,065.00	-
	-----	-----
	95,287.45	135,581.12
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի . .	13,388.55	10,201.43
 ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ		
ՅՈՒՆՈՒԱՐ 1-ին . . .	<u>13,575.78</u>	<u>3,374.35</u>
ԴԵԿԱՆՈՒԱՐ 31-ին . .	26,964.33	13,575.78

## *Z u t n h z u r z u r*

31 ԴԵԿԵMBER 1977

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<b>ՊԱՏՐԱՍ ԳՈՒՄԱՐ</b>	<b>Հիմնադրամի . . . .</b>	<b>49,878.54</b>
	Նկեղեց. Տիկնանց	2,696.16
	Դպրաց Դաս. . . .	598.84
	Մամիկոնեան Մշակ.	2,380.83
	Պարահանդէսի Յանձ.	21,328.61
	Երիտասարդաց. . . .	454.00
	Ծխական Խորհուրդ.	26,964.33
		<b>104,301.31</b>

ՀՈՂ ԵՒ ԿԱԼՈՒԽԱԾ -ԳՆՄԱՆ ԳԻՒՆԿ 1970-

Ա. Գր. Լուսաւորիչ եկեղեցի . . . . .	250,000.00
Յաւելուած Խորանի . . . . .	14,945.00
Յաւելուած Խոհանոցի եւլն. 1977 . .	17,518.00
	<hr/>
	282,463.00
	<hr/>
ՀՆԴՀ. ԳՈՒՄԱՐ . . . . .	386,764.31

ՊԱՐՏՔ ԵՒ ԶՈՒՏ ԱՐԺԵՔ

Ընթացիկ ՊԱՐՏՔԵՐ՝ ԵԿԵՂ. ԿԱՂ. ՄԱՐ. 12,500.00

## ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐՏՔ

ԶՈՒՏ ՄՐԺԵՔ

Ժ Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ո Յ  
ՆԱԽԱՀԱՇԻՒ  
1 9 7 8

Մ Ո Ւ Տ Ք

	<u>1977 Կատար.</u>	<u>1978 Նախահաշիւ</u>
Կանխիկ ի ձեռին . . . . .	13,576.00	26,964.00
Եկեղեցւոյ պնակէ . . . . .	12,155.00	13,500.00
Եկեղեցւոյ կալուածէն . . . . .	5,281.00	6,500.00
“Բուրաստան” ամսաթերթէ . . . . .	5,500.00	2,000.00
Շաբաթօրեայ Վարժարանէ . . . . .	3,943.00	4,000.00
Խորհրդակատարութենէ . . . . .	7,769.00	8,000.00
Անդամավճարներէ . . . . .	5,250.00	7,000.00
Նուիրատուութիւններէ . . . . .	3,007.00	5,000.00
Հւղագին նուիրատուութիւններէ . . . . .	24,505.00	27,000.00
Ալեք Մանուկեանի նուիրատուութիւն . . . . .	6,151.00	6,500.00
Պոլսոյ Պատրիարքարանի Գաղթականաց . . . . .	10,000.00	- - -
Մարմիններէ . . . . .	3,065.00	- - -
Գործունէութիւններէ . . . . .	12,212.00	36,000.00
Պատի օրացոյցերէ . . . . .	7,489.00	9,000.00
Դրամատան տոկոսէ . . . . .	891.00	300.00
	1,507.00	1,000.00
	<hr/>	<hr/>
	122,251.00	152,764.00

Ե Լ Ք

Եկեղեցւոյ ընդհ. ծախս եւ պաշտօնէութեան ԵԿԵՂԵՑԻՑ ԿԱԼՈՒԱԾԻՆ՝	17,446.00	35,000.00
Պահպանութեան . . . . .	25,536.00	25,000.00
Բարենորոզման . . . . .	17,518.00	15,000.00
“Բուրաստան” ամսաթերթին . . . . .	4,484.00	4,500.00
Շաբաթօրեայ Վարժարանին . . . . .	10,446.00	13,000.00
Պատի օրացոյցերու . . . . .	- - -	- - -
Գրասենեակային ծախսերու . . . . .	4,260.00	4,000.00
Զանազան գործունէութեանց . . . . .	1,156.00	1,000.00
Առաջնորդարանի տուրք ի նիւ Եորք . . . . .	11,376.00	9,000.00
Պոլսոյ Պատրիարք. Գաղթականաց . . . . .	3,065.00	- - -
	<hr/>	<hr/>
	95,287.00	106,500.00
Պատրաստ գումար ԴԵԿՏԵՄԲԵՐ 31-ին . . . . .	26,964.00	46,264.00

ՊԱՐՏՔԻ ՇԻՋՄԱՆ ՄԱՐՄՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՑՈՒԹԻՒՆ

1 9 7 7

**Մ Ա Խ Տ Ք**

	<u><u>31.12.77</u></u>	<u><u>31.12.76</u></u>
Պարահանդէսի Յանձնախումբէ . . . . .	5,000.00	8,000.00
«Յունայթըտ Զըրչ՝ տարեկան վարձքէ . . . . .	4,000.00	4,000.00
Անդամատուրք եւ նուիրատուութիւններէ . . . .	5,190.00	6,750.00
Դրամատան տոկոսներէ . . . . . . . . .	3,055.33	2,067.57
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ . . . . .	- - -	300.00
«Հանրի Պուրասա» Իողի գուտ եկամուտ . . . . .	- - -	16,700.00
Տիկնանց Օժանդակ Յանձ.ի հաշուեփակում . . .	7,056.24	- - -
<hr/>		
Տարուան եկամուտ . . .	24,801.57	37,817.57

**Ե Լ Ք**

Կալուածի պարտքի վճարում . . . . . . . .	12,500.00	12,500.00
Կալուածի պարտքի տոկոսի . . . . . . . .	4,265.63	5,078.13
Դրամատան ծախսներու . . . . . . . . .	2.00	3.00
Ծխական Խորհ.ի փոխանցուած անդամատուրք . .	- - -	1,000.00
<hr/>		
	16,767.63	18,581.13
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի . . . . .	7,533.94	19,236.44
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի . . . . .	- - -	- - -
Պատրաստ գումար ՅՈՒՆՈՒԱՐ 1-ին . . . . .	42,344.60	23,108.16
<hr/>		
Պատրաստ գումար ԴԵԿԱՅՄԲԵՐ 31-ին . . . . .	49,878.54	42,344.60

ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ  
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ

1 9 7 7

Մ Ա Բ Տ Ք

	<u>31.12.77</u>	<u>31.12.76</u>
Եկեղեցւոյ պնակի հասոյթներէ . . . . .	1,661.39	704.96
Նուիրատուութիւններէ . . . . .	1,097.50	440.00
Նուիրատուութիւն Շապիկներու . . . . .	530.00	- - -
Նուիրատուութիւն Ծաշերէ . . . . .	4,358.38	- - -
Դրամատան տոկոսէ . . . . .	35.06	24.79
<b>Տարուան Եկամուտ</b> . . .	<b>7,682.33</b>	<b>1,169.75</b>

Ե Լ Ք

Ճաշերու Եւ պատուասիրութեանց . . . . .	1,612.77	- - -
Եկեղեցւոյ բարեգարդարման . . . . .	2,586.77	- - -
Շապիկներու շինութեան . . . . .	984.06	- - -
Խորհրդակատարութեանց Եւ Երաժշտապետի . . .	839.00	- - -
Զանազան ծախսերու . . . . .	568.87	554.41
Ծխական Խորհուրդի փոխանցուած . . . . .	1,000.00	1,000.00
<b>Տարեկան Ելք</b> . . . . .	<b>7,591.47</b>	<b>1,554.41</b>
Մուտքի առաւելութիւն ի դէմ Ելքի . . . . .	90.86	- - -
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի . . . . .	- - -	384.66
Պատրաստ գումար ՅՈՒՆՈՒԱՐ 1-ին . . . . .	<u>507.98</u>	<u>892.64</u>
Պատրաստ գումար ԴԵԿՏԵՄԲԵՐ 31-ին . . . . .	598.84	507.98

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՑՈՒԹԻՒՆ

1 9 7 7

*Մ Ա Խ Տ Ք*

	<u><i>31.12.77</i></u>	<u><i>31.12.76</i></u>
Ժաշերէ ԵԼ Ուտեստեղէններէ . . . . . . . . .	1,638.51	2,267.66
Անդամավճարներէ . . . . . . . . . . . . .	443.00	237.00
Նուիրատուութիւններէ . . . . . . . . . . .	265.00	180.00
Դրամատան տոկոսէ . . . . . . . . . . . .	86.25	67.51
Տարեկան տօնավաճառէ . . . . . . . . . . .	4,907.88	4,231.67
Զանազաններէ . . . . . . . . . . . . .	29.85	9.70
Զբոսապոյտներէ . . . . . . . . . . . . .	1,837.50	476.00
<hr/>		
Տարուան եկամուտ . . .	9,207.99	7,469.54

*Ե Լ Ք*

Ժաշերու ԵԼ Ուտեստեղէններու . . . . . . .	445.80	754.95
Տարեկան տօնավաճառի . . . . . . . . . . .	1,513.66	1,409.06
Զանազաններու . . . . . . . . . . . . .	678.11	187.54
Խոհանոցի պիտոքներու . . . . . . . . . . .	---	689.03
Երուսաղէմի որդեգրուած սանի . . . . . . .	50.00	50.00
Զբոսապոյտներու . . . . . . . . . . .	1,359.35	362.50
Ծխական Խորհուրդոյ փոխանցուած . . . . .	5,000.00	5,000.00
<hr/>		
Տարուան ԵԼՔ . . . .	9,046.92	8,453.08
ԵԼՔԻ առաւելութիւն ի դէմ մուտքի . . . . .	161.07	( 983.54 )
Պատրաստ գումար ՅՈՒՆՈՒԱՐ 1-ին . . . . .	2,535.09	3,518.63
Պատրաստ գումար ԴԵԿՏԵՄԲԵՐ 31-ին . . . . .	2,696.16	2,535.09

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿ. ՅԱԽՉԱԽԱԽՈՒԹԻՒ  
ՏԱՐԵՎԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒԽՈՒԹԻՒՆ

1 9 7 7

*Մ Ո Ւ Տ Ք*

	<u><i>31.12.77</i></u>	<u><i>31.12.76</i></u>
Նուիրատուութիւններէ . . . . .	35.00	125.00
Վաճառուած գիրքերէ . . . . .	2,708.20	2,409.00
Վաճառուած ձայնապնակներէ . . . . .	---	125.00
Վաճառուած ձայնաերիզներէ . . . . .	140.00	240.00
Վաճառուած բարթերէ . . . . .	---	45.00
❖Սորայր Արթինեանահ դաշնակի համերգէն . .	---	1,246.00
❖Անսա նշանեանահ համերգէն . . . . .	489.00	---
	-----	-----
Տարուան Եկամուտ . . . . .	3,372.20	4,190.00

*Ե Լ Ք*

Գիրքերու գնումի . . . . .	1,917.55	1,991.78
Զայնապնակներու գնումի . . . . .	---	33.00
Զայներիզներու պատրաստութիւն . . . . .	358.00	140.00
❖Ա. Արթինեանահ համերգի ծախսեր . . . . .	---	635.00
Զանազանքի . . . . .	143.81	191.19
Ծխական Խորհուրդոյ փոխանցուած . . . . .	500.00	900.00
Նուիրատուութիւն Եկեղեցւոյ տարեղարձին . .	---	100.00
❖Ա. նշանեանահ համերգի ծախսեր . . . . .	81.00	---
	-----	-----
	2,980.36	3,990.97
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի . . . . .	391.84	199.03
Պատրաստ գումար Յունուար 1-ին . . . . .	1,988.99	1,789.96
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին . . . . .	2,380.83	1,988.99

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ 1977

ԵՐՈՒԱՆԴ ՇԻՇՄԱՆԵԱՆ  
ՏՈՔԹ. ԱՐԹՈ ՏԷՄԻՐՃԵԱՆ  
ԱՆԱՀԻՏ ԳԱԼԱՅՃԵԱՆ  
ՅԱԿՈԲ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
ԱԻԵՏԻՍ ԺԻՇԱՆԵԱՆ  
ԱՐԱՄ ՄԵԼԻՔԵԱՆ  
ԱՐԹՈ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԹԵԿՆԱԾՈՒԽԵՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ 1978  
(5 հոգի ընտրելի մէկ տարուան շրջանի համար )

- 1- ԱՅՎԱՏԵԱՆ ԺԻՐԱՅՐ
- 2- ԳԱԼԱՅՃԵԱՆ ԱՆԱՀԻՏ
- 3- ԺԻՇԱՆԵԱՆ ԱԻԵՏԻՍ
- 4- ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՐԹՈ
- 5- ՄԵԼԻՔԵԱՆ ԱՐԱՄ
- 6- ՇԱՔԱՐԵԱՆ ՎԱՀԱՆ
- 7- ՇԻՇՄԱՆԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ
- 8- ՊԱՐՌԵԱՆ ԳԷՈՐԳ
- 9- ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ՅԱԿՈԲ
- 10- ՏԷՄԻՐՃԵԱՆ ԱՐԹՈ

ԹԵԿՆԱԾՈՒԽԵՐ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆՅ 1978  
(4 հոգի ընտրելի երկու տարուան շրջանի համար )

- 1- ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
- 2- ԳՈՒԽԹՔԵԱՆ ԱԼԵՔՍ
- 3- ԳԱԼԱՅՃԵԱՆ ԱՆԱՀԻՏ
- 4- ԿԵՐԻՔԵԱՆ ԱՐԱ
- 5- ՊԱՍՄԱՃԵԱՆ ԱՐԹՈ
- 6- ՏԵՐ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՐԱՅՐ
- 7- ՏԵՐ ՅՈՎԿԱՆՆԵՍԵԱՆ ՄՐԲՈՒՀԻ
- 8-

ԹԵԿՆԱԾՈՒԽԵՐ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐՈՒ 1978  
(4 հոգի ընտրելի չորս տարուամ շրջանի համար )

- 1- ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
- 2- ԳՈՐԾԵԱՆ ԼԵՒՈՆ
- 3- ԿԷԾՈՒՃԵԱՆ ԱՐԵԱՀԻՐ
- 4- ԿՈՒՏՍՈՒԽԵԱՆ ՄԻՍԱՔ
- 5- ՄԵԼԻՔԵԱՆ ԱՐԱՄ
- 6- ՇԻՇՄԱՆԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ
- 7- ԶԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
- 8- ՔԷԹԼԻ ՎԱՀԵ

ԹԵԿՆԱԾՈՒԽԵՐ ՀԱՇՈՒՔՆՍԻՉ ՄԱՐՄՆԻ 1978  
(3 հոգի ընտրելի մէկ տարուան շրջանի համար )

- 1- ԲՐՈՒՏԵԱՆ ԻՎԱՆ
- 2- ԳԱՍԱՊԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ
- 3- ԿԵՐԻԿԵԱՆ ՅԱԿՈԲ
- 4- ՄԱՐԿՈՍԵԱՆ ՀԱՅԿ
- 5- ԶԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
- 6- ՔԷԾՈՒՐԻՒԼԵԱՆ ԼԵՒՈՆ

